Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2020թ. մայիսի 18-ի թիվ 4 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Խ. Հակոբյան
«18» մայիս 2020թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

(փոփոխություններով)

1. Սույն ընթացակարգը վերաբերում է Գավառի պետական համալսարանում (այսուհետ՝ Համալսարան) կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների (այսուհետ՝ ռեսուրսներ) պլանավորման և գնահատման, ուսումնամեթոդական բազայի բարելավման, ուսումնական ռեսուրսների կառավարման և դրանց մատչելիության ապահովման գործընթացներին:
2. Ռեսուրսները Համալսարանում կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ այն միջոցներն ու պայմաններն են, որոնք ձևավորում են կրթության որակին նպաստող կրթական միջավայր, ինչպես նաև ուսումնական նպատակներին համարժեք նյութական, տեխնիկական, տեղեկատվական և այլ համակարգերը:
3. Ուսումնամեթոդական բազան Համալսարանում իրականացվող բոլոր մասնագիտական կրթական ծրագրերով նախատեսված ուսումնական դասընթացներին անհրաժեշտ ուսումնամեթոդական փաստաթղթերը և նյութերն են, որոնք ապահովվում են Համալսարանի դասախոսների, ամբիոնների, ակադեմիական քաղաքականության բաժնի, այլ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից:
4. Համալսարանում կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովման ռեսուրսների ցանկն ընդգրկում է՝

ա) շենքեր,

բ) լսարաններ,

գ) տեսալսողական կաբինետներ,

դ) ուսումնական սենյակներ՝ կահավորված մուլտիմեդիական ցուցադրական համալիրներով,

ե) ուսումնական լաբորատորիաներ,

զ) համակարգչային լսարաններ՝ համացանցային կապով,

է) հեռահաղորդակցության ցանցեր, հեռարձակման ուսուցողական միջոցներ,

ը)մասնագիտությանը համապատասխան հատուկ կահավորված

արհեստանոցներ,

թ) ուսումնամեթոդական կաբինետներ,

ժ)էլեկտրոնային հրատարակումներ օգտագործելու դեպքում՝ այդ բազայից օգտվելու հնարավորություն,

ի) գրադարան, ընթերցասրահներ,

լ) այլ ռեսուրսներ:

5. Համալսարանը առնվազն տարին մեկ անգամ իրականացնում է ռեսուրսների և ուսումնամեթոդական նյութերի առկա վիճակի հաշվեգրում (ինվենտարիզացիա) և մշտադիտարկում (մոնիթորինգ), որոնց արդյունքներով գնահատում և բարելավում է կրթական միջավայրը՝ հաշվի առնելով գիտության, տեխնիկայի, մշակույթի, տնտեսության, տեխնոլոգիաների և սոցիալական ոլորտի առաջընթացը՝ հիմք ընդունելով.

ա) մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման արդյունքները,

բ) սովորողների գիտելիքների և կարողությունների, ինչպես նաև շրջանավարտ-ների իրազեկությունների գնահատման հետադարձ կապի ապահովման կառուցակարգերը,

գ) դասախոսական անձնակազմի մասնագիտական որակների բարձրացման ու շարունակական կրթության ապահովման գործընթացները,

դ)սեփական գործունեությունը գնահատելու և այլ ուսումնական հաստատությունների հետ համադրելու (բենչմարքինգի) իրականացման արդյունքները,

ե) կրթական ծրագրերի իրականացման գործընթացի բոլոր փուլերի ախտորոշման և մշտադիտարկման արդյունքները:

6. Ռեսուրսները պետք է պլանավորվեն այնպես, որ իրենց որակով, բազմազանությամբ և քանակով ապահովեն կրթական ծրագրերի առանձնահատուկ պահանջների բավարարումը և որակի պահանջների պահպանումը:

7. Ռեսուրսների պլանավորման գործընթացը հենվում է կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային կարիքների բացահայտման և գնահատման վրա, որոնք իրականացվում են կրթական ծրագրերի արտոնման, հաստատման և մոնիթորինգի փուլերում և միտված է դասավանդման և ուսումնառության գործընթացների արդյունավետ օժանդակությանը:

8. Ռեսուրսների պլանավորման գործընթացում հաշվի են առնվում Համալսարանում կիրառվող դասավանդման և ուսումնառության ձևերը և դրանց արդիականացման անհրաժեշտությունը:

9. Ռեսուրսների շարունակական բարելավման, դրանց օգտագործման կանոնները և ընթացակարգերը պարբերաբար վերանայվում ու թարմացվում են:

10. Համալսարանի ուսանողները, դասախոսները և վարչական կազմը հնարավորություն ունեն մասնակցելու ռեսուրսների պլանավորման և զարգացման գործընթացներին:

11. Բոլոր ռեսուրսները և առնչվող ծառայությունները, ներառյալ գրադարանային և տեղեկատվական ռեսուրսները պետք է հասանելի լինեն Համալսարանի բոլոր ուսանողներին, դասախոսներին և աշխատակիցներին՝ բոլոր մասնաշենքերում:
12. Գրադարանային ֆոնդը մշտապես համալրվում է մասնագիտական, ընդհանուր բնագիտական, հումանիտար, սոցիալական և տնտեսական դասընթացներին համապատասխան տպագիր և ¥կամ¤ էլեկտրոնային հրատարակություններով:
13. Համալսարանը թարմացնում է նյութատեխնիկական բազան՝ սովորողների առարկայական և միջառարկայական պատրաստությունը, լաբորատոր, գործնական և հետազոտական աշխատանքներն ապահովելու համար:
14. Սովորողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքի իրականացումը զուգորդվում է ուսումնամեթոդական ապահովմամբ և ծախսված ժամանակի հիմնավորմամբ:
15. Համալսարանն ապահովում է սպասարկող անձնակազմ, տեխնիկական շահագործման, վարչատնտեսական ծառայություններ՝ ուսումնական ռեսուրսները կառավարելու և դրանց մատչելիությունն ապահովելու համար:
16. Համալսարանի ամբիոններում ստեղծվում են անհրաժեշտ պայմաններ՝ մագիստրոսների գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկան կազմակերպելու համար:
17. Համալսարանում սահմանվում են ուսումնական ռեսուրսների համար պատասխանատու կառույցների և սպասարկող անձնակազմի որակավորման պահանջները և պարտականությունները, ինչպես նաև նրանց տրամադրվում են մասնագիտական կատարելագործման հնարավորություններ:
18. Համալսարանի ռեսուրսների համալրումը, ուսումնամեթոդական բազայի բարելավումը և կրթական միջավայրի զարգացումը կատարվում է Համալսարանի միջոցների, տարբեր ծրագրերի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

Հավելված 1

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻՑ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

հ/հ	**Գնահատման չափանիշը**	Գնահատման միավորը՝				
		1.	2.	3.	4.	5.
Դասախոսի բավարարվածությունը համալսարանի սպասարկումից						
1	Ուսումնական լսարանների վիճակը և կահավորանքը կարելի է գնահատել՝					
2	Ուսումնական լաբորատորիաների վիճակը և հագեցվածությունը կարելի է գնահատել՝					
3	Համակարգչային լսարանների վիճակը և հագեցվածությունը կարելի է գնահատել՝					
4	Գրադարանում և ընթերցասրահներում ժամանակակից մասնագիտական գրականու-թյան առկայությունը կարելի է գնահատել՝					
5	Գրադարանի և ընթերցասրահների վիճակը և գրականությամբ համալրվածությունը կարելի է գնահատել՝					
6	Էլեկտրոնային գրադարանի հագեցվածությունը կարելի է գնահատել՝					
7	Գրադարանի և ընթերցասրահների աշխատաժամերը և սպասարկումը կարելի է գնահատել՝					
Դասախոսների բավարարվածությունը Համալսարանի վարչակազմի աշխատակիցների և ուսանողների հետ փոխհարաբերություններից						
8	Ձեր և					
8.1	ֆակուլտետի ղեկավարության փոխհարաբերությունները կարելի է գնահատել՝					
8.2	ֆակուլտետի մյուս դասախոսների փոխհարաբերությունները կարելի է գնահատել՝					
8.3	ֆակուլտետի օժանդակ կազմի փոխհարաբերությունները կարելի է գնահատել՝					
9	դասախոսների դիմումների և բողոքների արտահայտման ընթացակարգերի թափանցիկությունը կարելի է գնահատել՝					
10	Համալսարանի կողմից հանրությանը տրամադրվող տեղեկատվության օբյեկտիվությունը կարելի է գնահատել՝					
11	Կրթական ռեսուրսների հասանելիությունը կարելի է գնահատել՝					
Դասախոսների բավարարվածությունը գիտահետազոտական աշխատանքներից						
12	Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության արդյունավետությունը կարելի է գնահատել՝					

« » _____202_թ.